ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 նոյեմբերի 2023 թվականի N 481-Ա

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍԻՆ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ, ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ, ԳՈՐԻՍ, ՏԱԹԵՎ ԵՎ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետին փոխարինող Ա. Ոսկանյանի 2023 թվականի նոյեմբերի 21-ի զեկուցագիրը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Լեռնային Ղարաբաղից 2023 թվականի սեպտեմբեր ամսին տեղահանված, Սյունիքի մարզի Սիսիան, Գորիս, Տաթև և Տեղ համայնքներում բնակություն հաստատած ընտանիքների համար անհրաժեշտ գույք ձեռք բերելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1657-Ն որոշման N 2 հավելվածի 01 բաժնի 08 խմբի 01 դասի 08՝ «Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձանց համար առաջնային անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների ծախսերի համար» ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի համար նախատեսված ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սահմանված ֆոնդից հատկացնել գումար 12000000 (տասներկու միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել վերոնշյալ գումարի վճարումը Սյունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության ավագ մասնագետ Մարիաննա Ստեփանյանի հաշվեհամարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնելու նպատակով:

3. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության ավագ մասնագետ Մարիաննա

Ստեփանյանին՝ սույն որոշման հավելվածում նշված ընտանիքներին անհրաժեշտ գույքը հանձնելուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն:

23.11.2023

X

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Подписано: HARUTYUNYAN HAYK 1302840382

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ **Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2023թ. նոյեմբերի 22
ք. Կապան